ԿԱՐԵՆ ՀԱՄԼԵՏԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ծննդյան տարեթիվ՝ 25.05.1969

Ծննդավայր՝ ՀՀ, քաղաք Երևան

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Կարեն Համլետի Խաչատրյանը** Երևանում միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո 1986 թ. նպատակային ընդունելությամբ ընդունվել է Բելառուսական պետական համալսարանի պատմության ֆակուլտետը:

1987–1989 թթ. ծառայել է Խորհրդային բանակում:

1989 թվականից ուսումը շարունակել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում, որն ավարտել է 1993 թ.:

1994 թ. ձևակերպվել է որպես հայցորդ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում:

1998 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ նվիրված հայ–ռուսական հարաբերություններին 1920-1922 թթ.:

2006 թ. ստացել է դոցենտի գիտական կոչում:

2015 թ. պաշտպանել է «Հայաստանը ԽՍՀՄ ռազմաարդյունաբերական համալիրի համակարգում (1922–1991 թթ.)» թեմայով դոկտորական ատենախոսություն:

2016 թ. ստացել է պրոֆեսորի գիտական կոչում:

Կ. Խաչատրյանը 1995 թ. աշխատանքի է ընդունվել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում որպես ավագ լաբորանտ, այնուհետև նշանակվել է կրտսեր, ավագ և առաջատար գիտաշխատողի պաշտոններում:

1999–2008 թթ. զբաղեցրել է ինստիտուտի գիտական քարտուղարի պաշտոնը, եղել է ՀՀ ԲՈՀ–ի 004 «Հայոց պատմության» մասնագիտական խորհրդի գիտական քարտուղարը:

2008 թվականից Կ. Խաչատրյանը Պատմության ինստիտուտի փոխտնօրենն է և ինստիտուտի գիտական խորհրդի նախագահի տեղակալը: 004 «Հայոց պատմության» մասնագիտական խորհրդի անդամ է: 2017 թվականից՝ համատեղությամբ Ընդհանուր պատմության բաժնի վարիչն է:

2003–2009 թթ. Կ. Խաչատրյանը համատեղությամբ վարել է Երևանի «Հրաչյա Աճառյան» համալսարանի Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնը:

2009 թվականից Կ. Խաչատրյանը համատեղությամբ ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի մագիստրատուրայի Պատմության, քաղաքագիտության և միջազգային հարաբերությունների ամբիոնի վարիչն է:

Կ. Խաչատրյանը դասավանդում է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում, Մոսկվայի Մ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի Երևանի մասնաճյուղում:

Կ. Խաչատրյանի գիտական հետաքրքրությունների շրջանակում են Հայոց նոր և նորագույն ժամանակաշրջանի պատմության տարաբնույթ հիմնախնդիրները՝ Հայկական հարց և Հայոց ցեղասպանություն, հայ–ռուսական հարաբերություններ, Հայաստանի առաջին և երկրորդ (խորհրդային) հանրապետությունների, ԼՂԻՄ–ի պատմություն և այլն:

Կ. Խաչատրյանը հեղինակ է **4** մենագրությունների, ավելի քան **70** գիտական հոդվածների, որից՝ **5** ընդգրկված են **Scopus/Webofscience (Q 1, 2023-2026)** ՄԳԾ-ում: Համահեղինակել է «Հայոց պատմություն» ակադեմիական քառհատորյակի չորրորդ հատորի երկու գրքերը (Նորագույն շրջան, 1918-1991), **5** աշխատություններ, փաստաթղթերի և նյութերի **4** ժողովածուներ, դպրոցական **7** դասագրքեր, ուսումնամեթոդական ձեռնարկներ, ծրագրեր և այլն:

Կ. Խաչատրյանը 2013-2024 թթ. հանդիսացել է ՀՀ Գիտության պետական կոմիտեի և ՀՀ ԳԱԱ ֆինանսավորմամբ իրականացվող **4** դրամաշնորհի/թեմայի ղեկավար:

Կ. Խաչատրյանի գիտական ղեկավարությամբ ինստիտուտի **3** ասպիրանտ (Հ. Սուքիասյան (2010), Գ. Ժամհարյան (2014), Գ. Ղազարյան (2025)) հաջողությամբ պաշտպանել են թեկնածուական ատենախոսություններ:

Կ. Խաչատրյանը գիտական զեկուցումներով, դասախոսություններով և ելույթներով հանդես է եկել հանրապետական և միջազգային մի քանի տասնյակ գիտաժողովներում, կլոր սեղաններում, գիտագործնական սեմինարներում, երիտասարդ պատմաբանների ամառային դպրոցներում, սփյուռքահայ համայնքներում, Հայոց բանակի զորամասերում և այլն:

Կ. Խաչատրյանը պարգևատրվել է ՀՀ ԳԱԱ գովեստագրով, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի վաստակագրով, ԵՊՀ «Ոսկե մեդալով», ՀՀ ՊՆ պատվոգրով, Արցախի Հանրապետության «Երախտագիտություն» շքանշանով և այլն:

Կ. Խաչատրյանը կուսակցական չէ, ամուսնացած է, ունի որդի և դուստր, երեք թոռնիկ: